ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 18 ՄԱՐՏԻ 1881

ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 18 ՄԱՐՏԻ

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի եւ տոն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տոն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Յօդուածագիրք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ редакцію газеты «Мегу Айастани», въ Тифлисѣ, կամ Rédaction de «Meghou Haïastani», à Tiflis (Caucase).

Խմբագրութեանս ուղղած թէ յօդուածները եւ թէ նամակները պէտք է գրուած լինին գիտի ստորագրութեամբ եւ հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 1½ կոպէկ։
Յայտարարութիւնները ընդունվում են պ. Բ. Շահվերդեանի պավիլիոնում։
Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ՀԱՅԱՍՏԱՆ

№ 42 ՔՍԱՆԵՒԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 42

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

Սիմֆերոպոլի «Հայուհեաց ընկերութիւնը»։
Ա ղ գ ա յ ի ն. — Թղթակցութիւն Աղեքսանդրապօլից։
Ք ա ղ ա ք ա կ ա ն. — Մանրամասնութիւնք կայսեր դաւադրութեան մասին. — Քաղաքական լուրեր։
«Մեղուի» հեռագիրներ։
Մ ա ն ր լ ո ւ ր ե ր։
Յ ա յ տ ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ն ե ր։
Բ ա ն ա ս ի ր ա կ ա ն. — Շրջատեսութիւն Դելիջանի անտառավարչութեան տեղերին։

ԹԻՓԼԻՍ, 18 ՄԱՐՏԻ 1881 թ.

Մի ազգի մասերն որքան հեռանում են իրանց կենդրոնից, այնքան աւելի խորթանում են նորա կորցնելով իրանց ազգային առանձնայատկութիւնքն եւ ենթարկվում քնականաբար աւելի զօրեղ տարրի ազդեցութեան, որոյ մէջ նորա տեղաւորվում են։ Նորա եւ՛ բոլորովին ձուլվում են օտարների մէջ, եթէ նրանց չրջապատող տարրը շատ զօրեղ է համեմատաբար եւ դիմադրող ազգային տարրը նուազ։ Այս քնական երեւոյթին ենթարկվել են եւ շատ հայ գաղթականութիւնք Եւրոպայի եւ Ասիայի շատ երկիրներում եւ անհետացել են, տխուր յիշատակներ թողնելով իրանց գոյութեան մասին։ Այսպիսի հանգամանքներում միակ միջոցն անձնապաշտպանութեան է գաղթականութեանց մէջ զօրացնել ազգային առանձնայատկութիւնքն, որ նորա իրեւ դիմադրող ոյժ պահպանեն նոցա գոյութիւնը։

Այս տեսակէտից աւելի ուրախալի է եւ մխիթարական տեսնելը մեր հայ հեռաւոր գաղթականութեանց մէջ ծագող նորանոր ընկերութիւնքն, որոնց նպատակն է ազգային լեզու եւ դաստիարակութիւն տարածել։ Այսպէս ուրախալի է եւ մեր թղթակցի հաղորդածը Սիմֆերոպոլից, որ այդ հայ հասարակութիւնը, կտրած հայ կենդրոնից դարերի ընթացքում, աւելի օտարախօս էր քան հայախօս եւ օր աւուր աւելի խորթանում էր իւր մայրենի լեզուից եւ ազգութիւնից։ Բայց վերջին տարիներս չնորհիւ ազգային դպրոցի սկսաւ ստանալ հայութեան կերպարանք եւ ահա՛ այժմ այդ գործով հասատատութեան վերայ աւելանում է եւ մի «Ընկերութիւն Հայուհեաց», որոյ նպատակը պիտի լինի ազգային ուսումն եւ դաստիարակութիւն տարածել։ Այդ ընկերութեան հիմն դրել են մեծ. Սեֆերեանք երկու եղբարք, որոնց վարձը յարգ և պատիւ է ապագայ հայ սերնդից։ Մենք յոյս ենք տածում, որ այդ բարի գործը Սիմֆերոպոլի հասկացող և բանիբուն ազգայնոց չնորհիւ կ'աճի և կը զարդանայ ու կ'ծառայէ ոչ միայն Սիմֆերոպոլի հայ հասարակութեան չահերին, այլ և Ղրիմի թերակղզու միւս քաղաքների հայ հասարակութեանց, որոնց առաջնորդ և ներկայիչէ Սիմֆերոպոլի հայ հասարակութիւնը թէ իւր աւելանալի մեծ թուով և թէ իւր զարգացմամբ։

Աւելի ուրախալին այն է, որ Ընկերութիւնը հայուհեաց է», գլխաւոր դերը պէտք է հայ տիկնայք խաղան, բայց յայտնի է, որ սոքա աւելի կարող են քան տղամարդիկ, քանի որ գործը վերաբերում է բարեգործութեան։ Կանայք աւելի զգայուն են, եւ անդատ եւ տոկուն ու համբերող գործի մէջ, որին նորա ձեռնամուխ են լինում։ Զտարակուսենք, որ Սիմֆերոպոլի հայ տիկնայք ցոյց կ'տան իրանց այդ յատկութիւնները եւ յիրաւի գործ կ'տեսնեն, առանց մինչեւ անգամ իրանց մարդոց նեղութիւն տալու, որովհետեւ պատասխանատուութիւնը կը մնայ նոցա վերայ։

Ուրախալի է եւ այն, որ Ղրիմի թերակղզում միւս քաղաքների հայ հասարակութիւնքն եւ մանաւանդ Ղրիմի մայրաքաղաքի հայ հասարակութիւնը, որ ամենից առաջ պիտի ընդունակ լինի ազգային ուսումն եւ դաստիարակութիւն տարածել, ինչպէս կարելի է դատել ընկերութեան հիմն դրելեն մեծ. Սեֆերեանք երկու եղբարք, որոնց վարձը յարգ և պատիւ է ապագայ հայ սերնդից։ Մենք յոյս ենք տածում, որ այդ բարի գործը Սիմֆերոպոլի հասկացող և բանիբուն ազգայնոց չնորհիւ կ'աճի և կը զարդանայ ու կ'ծառայէ ոչ միայն Սիմֆերոպոլի հայ հասարակութեան չահերին, այլ և Ղրիմի թերակղզու միւս քաղաքների հայ հասարակութեանց, որոնց առաջնորդ և ներկայիչէ Սիմֆերոպոլի հայ հասարակութիւնը թէ իւր աւելանալի մեծ թուով և թէ իւր զարգացմամբ։

Աւելի ուրախալին այն է, որ Ընկերութիւնը հայուհեաց է», գլխաւոր դերը պէտք է հայ տիկնայք խաղան, բայց յայտնի է, որ սոքա աւելի կարող են քան տղամարդիկ, քանի որ գործը վերաբերում է բարեգործութեան։ Կանայք աւելի զգայուն են, եւ անդատ եւ տոկուն ու համբերող գործի մէջ, որին նորա ձեռնամուխ են լինում։ Զտարակուսենք, որ Սիմֆերոպոլի հայ տիկնայք ցոյց կ'տան իրանց այդ յատկութիւնները եւ յիրաւի գործ կ'տեսնեն, առանց մինչեւ անգամ իրանց մարդոց նեղութիւն տալու, որովհետեւ պատասխանատուութիւնը կը մնայ նոցա վերայ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇՐՋԱՏԵՍՈՒԹԻՒՆ
ԴԵԼԻՋԱՆԻ
ԱՆՏԱՌԱՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՏԵՂԵՐԻ *)

Ն Ո Խ Ճ Ի Ր

Ք ե ր ո վ Բ է Պ ո ղ ո ս ե ա ն ց.

(Պրոֆեսորին Ս. Պետերբուրգի կայսերական համալսարանի).

Այստեղի մալականները երկուս են բաժանվում՝ հատատուններ և պրիգունները։ Հաւատում են Քրիստոսին և ուսնում են յարութիւն և կարծում են աւետարան և սաղմոս իրենց աղօթատեղերում։ Պատարագ չունին, որպէս ունին քրիստոնեայք։

Պրիգունները շատ չեն դանազանվում սոցանից. բայց գլխաւորն այն է, որ ընտրելը իրր թէ ներշնչած Աստուածանից սկսում է ուսուցանել, և նրան հետեւում են ուրիշները։ Շատերը այս պաշտպից լինձ հաւատացնում էին, որ հայերից մօտ 10 մարդ մտել է իրենց պաշտը՝ երեւանցիք և ալեքսանդրապօլցիք։ Այսպիսի հայք սկզբում պաշտպացող ծառայում են եղել, և մնալով նոցա պաշտական ներգործութեան ենթարկուած՝ մտել են նոցա պաշտը։

Ահա թէ ուր է տանում անտարբերութիւնը դէպի իւր ազգային առաքելական եկեղեցին։ Էլ ուր են ասում թէ հայ լուսաւորչականը հալածասէր է, մոլեռանդ է, մինչ թոյլ է տուած ամեն վարդապետ մտնելու։

Տգիտութիւնը մեր քահանաների գլխերում շատ զօրեղ է։

Ազգի վրայ ոչինչ առաւել ազդուներգործութիւն չի կարող ունենալ, բացի կենդանի խօսքը. բայց ինչ, տարի տարիներ անցնում են և հայ գիւղացի մարդը երբէք մի կենդանի բան իր պզտի իր հաւատի մասին չի լսում. ինքը չի գիտէ թէ ինչին պիտի հաւատայ և ինչ պարտաւորութիւն ունի դէպ եկեղեցի և պզտ։ Միթէ նա մեղադրելու է որ, թողեց պզտը, հաւատը և կորաւ գնաց՝ հայութիւնը ուրանալով։ Մեղաւոր նա չէ, մեղաւորները եկեղեցու ներկայացուցիչներն են . . .

Այս մասին գովելի են թէլաւի հայ քահանայք, որ գոնեա վրացերէն՝ են քարոզում և կոպտացել սրտերի մէջ կայծ են դնում աղգասիրութեան . . .

Ջմեռը Դելիջանի լերանց վրայ չրաընակվում է գէթ եօթը ամիս—և ձիւնը այնքան շատ է, որ բարձրանում է մէկ սաժէն։ Թէև անտառը հեռու չէ գիւղից, բայց հետեւելով հայոց սոքա ևս պատրաստում են իրրև վառելիք ածխարներ։ Ցարուայ միջոցին հաւաքելով կենդանեաց աղբը ի միասին, ամառը կորատում են նրանց մէկ մէկ ֆուտ երկայնութեամբ և յետոյ չորացնելով բաց օդի մէջ, կազմում են քառանկիւնի աղիւսներ։ Սոցանից ասում են մեծ տաքութիւն է լինում բայց հասկանալի է, որ բնակարանի մէջ այրելու ժամանակ կանգնում է գարշելի հոտ, որին դիւրացիք սովորած լինելով՝ առաւել չեն նեղանում։ Խեղճերը բաւական են, որ դուռը ցրտին կարողանում, թէկուզ այս միջոցով, տաքացնել իրենց բնակարանները, և ազատվել երեխաներնց ցրտի վտանգից։

Բարոյականութիւնը, հիւրասիրութիւնը սոցա մէջ շատ շատ պակասաւոր են։ Լաւն այն է, ասում են հայ գիւղացիք, որ սոցա կանայքը շատ շատ աշխատասէր են, որ կանայքը և աղջիկները մարդոց հետ ի միասին բանում են թէ արտերում և թէ հեռու տեղերում, որ մենք չենք կարող։

Գիւղում կայ երկու դուքան. երկուսն էլ հայք են պահում—նոր բայազետցիք, մէկը վաճառում է գինի և օղի՝ որին շատ կարօտ են մալականները, և միւսն ծախում է չորացու ապրանք, ըստ մեծի մասին կարմիր, որ սովորական հագուստ է մալականների կանանց։ Այս գիւղից 6 վերստ հեռաւորութեան վերայ դրած է հայոց գիւղ՝ Զուբովկուն. սորա դիրքը գառիվայր է։ Հողը աւազոտ կաւ է։ Հայք կազմում են թուով 114 տուն։ Սոցա կէսը եկած է հին Բայազետ քաղաքից, ինչպէս իրենք ասումեն 1829-ն Արծաթ գիւղից։ Միւս կէսը բազմացած է իրենց մէջ ծննդեամբ։ Ժողովուրդը պարապում է խաչնամաքուրեամբ և հողագործութեամբ, ցանելով գարի և ցորեն։ Բարձրութեան պատճառաւ այստեղ չեն հասնում բոստանի բոյսերը, օրինակ վարունգ և կաղամբ, բայց բողկ և սոխ յաջողում է։ Ծառատունկեր չկան։ Ինչպէս ամեն հայոց գիւղ, Զուբովկուն ևս չատ անկանոն դրութեան մէջ է։ Փողոց ասած բանը՝ այստեղ չկայ։ Տները չինած են խառն ի խուռն ճանապարհի, հէնց նորա ճակատին, այնպէս որ անցքը ոլոր մոլոր թեքվելով, երբեմն լայնալով, երբեմն նեղնալով, որ դժուար է կառքին անցնել—վերջը անհետանում է տների նեղ նեղ չարքերում։

Շէնութիւնները բոլորը գետնավիր են և ունեն կտոր հողով ծածկած։ Որովհետեւ պատուհանները, որ ըստ մեծի մասին առանց ապակիի լինելով, փոքր քանդուածների են նման, այդ իսկ պատճառաւ լոյսը բնակարանների մէջ խիստ թոյլ է. սրա օգնութեան համար դռները միշտ բաց են լինում թէ օդափոխութեան և թէ լուսաւորութեան համար։ Ցատակը անհեակների մէջ դեռ չօայլութեան նըշան է, և ով կարող է աղիւսներով է ծածկում։ Առաւել խեղճ տները պատուհանի տեղ կտուրի վրայ երդիկ ունին չինած, որտեղից լոյս արևը լուսաւորում է խղճուկ խուցը։

Կանանց հագուստը առաջի անգամ նայողին կը թուի թէ զանազան կտորտանք են։ Հաղնում են վրան չուքա, որ սովորաբար կարմիր է, և արխալուխ։ Ոտահագուստը կարմիր մանուած է։ Դէմքին կապում են պօլ և յետոյ զարդարվում են լաչաքով։ Ինձ ոչ մի անգամ չը յաջողեցաւ ոչ մի տեղ տեսնել գիւղացի օրիորդ երեսաց, թէև չատ անգամ դիտմամբ մօտենում էի տների չեմքին—բոլորը լ զուր էր։ Հարցնելիս անգամ պատասխան չէի ստանում. այն էլ չատ էին համարում, եթէ ձեռի չարժողութիւնով՝ հարցիս հասկանալն էին ցոյց տալիս։ Այն ինչ մարդիկ դուրսը աշխատութեան են գնում, կանայք և աղջկունք պարապ չեն մնում։ Նորա պատրաստում են կերակուր, լուացք են անում, ջուր են բերում կժերով, կարում են չոր լրենց և որդոց համար, գործում են գուլայ—մի խօսքով բոլոր տան կառավարութեան ծանրութիւնը նոցա վրան է դրած։

Հարեցողութիւն, անբարոյականութիւն և այլ ուրիշ զեղխութիւն դեռ

*) Տես «Մեղուի» № 41.

ՎԱԳՆԿՈՒԻ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՍՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑՈՒ ՄԵՂՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՐՄԱՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ներկա տարվա ապրիլի 14-ին վաղուց սպասված անձրևը սկսվեց առատ տեղալ։ Ամենքս ուրախացանք, որ Աստված մեր աղոթքները լսեց և մեզ ողորմեցավ։ Ես էլ ուրախ էի, որ ամենքի հետ միասին կարող էի Աստծուն գոհություն մատուցանել։ Բայց հետո մտածեցի, որ անձրևը ուրիշ ոչ ոքի չի ուրախացնում, քան թե ինձ։ Ես ունեի մի հարյուր ոչխար, որոնք ամբողջ ձմեռը ոչ մի կաթիլ ջուր չէին խմել։ Ամենքս գիտենք, որ ոչխարը ջրի մեծ սեր ունի։ Ես ուրախ էի, որ իմ ոչխարները կարող են ջուր խմել։ Ես ուրախ էի, որ

դիմեց դուրս գնալու, բայց, ինչպես և սպասելի էր, դուռը փակ գտավ, և «Պետր Իվանովը» «Միլորդի» նման ընկավ պոլիցիայի ձեռքը: Կալանավորելու ժամանակ «Պետր Իվանովը» ձեռքը մոտրեց զրպանը և արագությամբ հանեց ատրճանակը, բայց իսկույն ձեռքից խլեցին: «Ես արքայասպան եմ Ալէքսանդրովսկայից», ներկայացրեց իրան «Պետր Իվանովը», և յետոյ զարմանում էր, թէ ինչպէս պատահեցաւ, որ նա իրան կալանաւորելու թողեց:

«Եթէ դուք ինձ հանդիպէիք իմ բնակարանում կամ փողոցի վերայ, այն ժամանակ ինձ հետ այդպէս հեշտութեամբ չէիք վերջացնիլ ձեր գործը—իմ ատրճանակս ի հարկ է լսելու էր),—ես ձեզանից կ'հեռանայի, ասաց «Միլորդի» հիւրը: Ես պիտեմ, շարունակեց նա, որ ես խիստ հաճելի պատառ եմ կառավարութեան համար»:

Նորանից ետքը բոլորովին նոր, գեղեցիկ ատրճանակի վերայ սրուեթիւններ էր անում «Պետր Իվանովը», ասելով, որ նրան ատրճանակը խիստ աժան է նստել. նա վճարել է երեսուն և հինգ րուբլի միայն նորա համար, որովհետև նա առնուած էր ուրիշ շատ զէնքերի հետ, եթէ այդպէս չլիներ, այն առանձին գնած լինէր, նոյն իսկ արտասահմանում կարժէր նա 45 րուբլի:

«Միլորդի» սենեակում հետաքննութիւնը բաց արաւ 170 հատ մար «ժողովրդական կամքի» թերթից: Մի պետական յանցաւորի նշանների վերայ հիմնած՝ վանդենբէրգենը և Լայխը ենթադրում էին, որ նոքա երկրորդ կալանաւորուածի մէջ գտել էին Հարտման յանցաւորի ընկերներից մէկին, Ժելեաբովին, բայց «Պետր Իվանովը» հերքում էր այդ: Կալանաւորուածները հէնց նոյն երեկոյեան ուղարկուեցան կառքով սկզբնական բանտարկման տանը և մնաւ պրօկուրօրի հսկողութեան տակ: Մինչև այն ժամանակները պրօկուրօրի օգնական Տօբրօժինսկին գարձաւ «Պետր Իվանովին» և ասաց. «ես ձեզ մնաբերում եմ 74 թուի դործից, դուք Ժելեաբովն էք, —«Պետր Իվանով» կարճելակը պատասխանեց. «ձեր ամենախոնարհ ծառան»:

Սորա բնակարանում, Իզմայլովսկի պոլկի փողոցում, գտնուեցաւ դինամիտ:

Այսպէս ուրեմն յեղափոխական կուսակցութեան պարագլուխ Տրիգոնին և նշանաւոր պետական յանցաւոր Անդրէյ Ժելեաբովը վանդենբէրգենի և Լայխի ձարպիկութիւնով և եռանդով երեք մօտիկ ապագայում դատարանի առաջ դուրս կ'գան:

Սորա համար հանդուցեալ պետական յանցաւոր Գօլովէնկրզը սաստմ էր, որ վերին աստիճանի զարգացած և հանճարեղ անձնաւորութիւն է, և թէ դա գլխաւոր մասնակիցն է եղել բոլոր գեհենական աշխատանքների մէջ, որոնց նպատակը արքայասպանութիւնն էր:

Կ. Պօլսից մարտի 14-ին «Polit Corresp.» լրագրին.—Այստեղի պետականներից միքանիսին, ինչպես լսում է, յանձնուած է Դրան ուշադրութիւնը դարձնելու Հայաստանի անտանելի դրութեան վերայ և յիշեցնելու Դրան իւր խոստումները այդ նահանգի վերաբերեալ: Եւ հայոց պատրիարքը հարիւրը հազարից դիմելու առաջին պաշտօնեայ Սայիդ-փաշային պաշտօնական ծանուցումով: Ցոյց տալով նորան այն չատ անարդարութիւնների վերայ, որոնց ենթարկվում է միշտ հաւատարիմ հայոց ազգը, նա խնդրեց որ նոցա առաջն առնուի չուտափոյթ կարգադրութիւններով: Պաշտօնեաների խորհուրդի նախագահը պատասխանեց, որ Հայաստանին վերաբերեալ նշանաւոր գանգատներին մօտիկ ժամանակում դոհացուցիչ լուծումն կ'արուի: Բայց ինչպես երեւում է պատրիարքը այդ նոր խոստումով աւելի գոհ չէ, որովհետև նա պատրաստում է մի լնդրագիր սուլթանին, որի մէջ նա մանրամասն բացատրում է հայոց ազգի անմխիթար դրութիւնը և դառնում է խնդրով սուլթանի արդարամտութեանը:

***

Կ. Պօլսից ստացած լուրերին համաձայն, Դուռը պատրաստ է ցունաստանին յանձնելու Թէսսալիայի մեծ մասը, բայց մինչև հիմայ Էպիրոսից ոչինչ չէ կամենում գիջանել: Վիէննայից մի նամակով գրում են «Հաւասի գործակալութեան», որի մէջ հաչուած են այն բոլոր բարիքները, որ ձեռք կ'բերէ ցունաստանը Թէսսալիայի միանալովը: Թէսսալիայի լայնատարած և պտղաբեր դաշտերի վերայ լաւ աճում են ցորեն, բամբակ, ծխախոտ և նոյնպէս ափիոն, իսկ Պէնէոսի ափերում գտնուած արօտատեղիները չատ նշանաւոր են: Նահանգի տարածութիւնը համապատասխանում է 13,000 քիլօմէտրի: Արհեստագործութիւնը այնչափ տարածուած չէ, սակայն աւելի է քան Էպիրոսում: Մետաքսի և բրդէ հիւսուածքների արտադրութիւնը կարող է ժամանակով չատ զարգանալ: Վ'օլոյի նաւահանգիստը չատ մեծ նշանակութիւն ունի: 1873-ին վաճառահանումը (ծխախոտ, պրօվանսի ձէթ, բամբակ, բուրդ և ցորեն) հասնում էր 19 միլիոն ֆրանկի, բայց վաճառահանումը և վաճառարերումը միասին հասնում էր 30 միլիոն ֆրանկի: Նահանգի գլխաւոր քաղաքը—Լարիսսա ունի 25,000 բնակիչ: Թրիկալի բնակիչները թուով 10,723, իսկ կարդիտսային է 5,816. մնացած քաղաքները նման են աւելի մեծ գիւղերի և նոցա ոչ մէկի մէջ բնակիչների թիւը 3,000-ի չէ անցնում, բոլոր բնակիչների թիւը հասնում է 300,000-ի, որոնցից մէկ ութերորդ մասը կազմում են մահմետականները: Համեմատաբար անշան քանակութիւնը բնակիչների աւելի օգուտ է յոյների համար քան թէ անարմատութիւն, որովհետև ցունաստանից չատերը կը գան այդ նահանգը լցնելու:

***

Անգլիական լրագիրները հաղորդում են. կայսեր ապահովելու փորձի մասին արդէն մարտի 1-ին կիրակի ժամը 5-ին լսմայ են տուել Լօնդօնի սոցիալ-դեմոկրատներին փարիզից, Ժէնեվից և Պետերբուրգից իրանց համախոհները: Այս լուրը մեծ համակրութեամբ ընդունուեցաւ: Ոչնչականների գլխաւոր կացարանը նորերումս տեղափոխուեցաւ Լօնդօնից փարիզ, սորա հետ և Հալտմանը, Մոսկուայի չարագործութեան մեղաւորը անհետացաւ այն չրջանից, ուր նա սովորաբար այցելում էր Լօնդօնում: Նա իւր բնակութիւնը թողել է մի տասն օր առաջ և ոչոքին հաստատ յայտնի չէ, թէ ուր է գտնվում նա այժմ: Նորա բարեկամներից մի քանիսը ենթադրում են, որ նա անցել է ցամաքի վերայ, բայց ուրիշները պնդում են որ նա Անգլիայից չէ դուրս եկել: Հէնց հիմայ հրատարակած հրովարտակն, որ ուղղուած է երկրագնդի երկու մասո յեղափոխիչներին, հրաւիրում է նոցա մասնակցելու միջազգային ընկերութեան—յեղափոխական կօնգրէսին, որը կայանալու է ներկայ տարուայ 14-ին յունիսի Լօնդօնում:

***

Նոյնպէս նշանաւոր է անգլիական լրագիրների հետևեալ տեղեկութիւնը: Շաբաթ օրը, այսինքն զարհուրելի անցքի նախընթաց օրը Լօնդօնում և Լիվերպուլում բնակվող գաղթական-ոչնչականները այնպիսի մի արտաքոյ կարգի գործունէութիւն և չինարում ցոյց տուել իրանց սովորական ժողովուրդը տեղերում, որով պօլիցիայի ուշադրութիւնը իրանց վերայ դարձրին, և այս վերջինը այս եղելութեան մասին հեռագրով հաղորդեց Պետերբուրգ:

***

«Berl. Tagblatt» թերթին հեռագրում է նորա թղթակիցը Պետերբուրգից, որ մարտի 1-ի չարագործութիւնը վճռուած է եղել կատարելու անցեալ չաբաթօրայ սկզբներում մի գաղտնի կլուբում, որը գտնվում է Պետերբուրգում, Օբուխովի պրօսպէկտի վերայ: Կլուբի երկու անդամների կալանաւորելը չատպեցրեց նորա իրագործումը: Չարագործները բռնել էին այն ամէն փողոցները, որով պիտի անցնէր հանդուցեալ կայսրը, այնպէս որ անհնարին էր կայսեր համար ազատուիլ աղէտքից:

***

Անգլիայի պատգամաւորների ժողովում ելնելից և ուրիշ կարևոր հարցերի քննութիւնը արագացնելու համար Գլադստօնը առաջարկում է վճռել այդ խընդիրների անյետաձգութիւնը և այս առաջարկութեանը լրացն է մարտի 12-ին հրատարակած «սպիկերի (նախագահ պատգամաւորների ժողովին) համար նոր կանոնները», որը առաջարկում է ելնելից քննութեան համար այնպիսի կարճ և բռնի գործելու եղանակ, ինչպիսին էր արդէն ընդունուած Իրլանդիայի սահմանադրական օրէնքների համար: Այդ առիթով «Köln. Zeit.» գերմանական մեծ լրագիրը բացականչում է. Անգլիայի պատգամաւորների ժողովը սոսկում է կատարելու իր առաջին և գլխաւոր պարտաւորութիւնը — պետութեան ելից և մտից քննութիւնը—սպիկերի բռնակալութեան ներքոյ: Ձչմարիտ ինչպիսի օտարոտի հակասութիւն է, որ հէնց ազատամիտ Գլադստօնին և պատգամաւորների ժողովի ազատամիտ նախագահին է վիճակուած այդպիսի զարհուրելի փորձ փորձել պատգամաւորների ժողովի ազատութեան դէմ, ինչպէս չատերը անուանում են «Անգլիայի սահմանադրութեան թաղումը»: Ձակատագիրը երբեմն անողոքելի է և Գլադստօնը դառել է նորա ձեռքին գաւազան: Նա ողևորեց յոյներին, հիմայ ինքը պէտք է հնազանդի ուրիշ պետութիւնների վճռին: Նա խոստացաւ իրլանդացիներին ոսկէ լեռներ, նորա փոխարէն չնորհում է նոցա ստիպողական օրէնքները: Նա հերքում էր Տրանսվալի միացնելը, իսկ հիմայ ինքը պատերազմում է տրանսվալցի բօյերների դէմ, որոնք անդլիական զէնքին հասցուած հարուածի վերայ են տալիս: Եւ ի վերջոյ ինքը գառնում է գործիք այն ճնշող միջոցների մոցինելու համար, որոնք ուղղուած են ընդդէմ ազատ պարլամենտի, ազատ Անգլիայում:

«ՄԵԳՈՒԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ).

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16-ին մարտի: Երեկ համաձայն հանդիսապրին կատարվեցաւ ի ՏԷՐ հանգուցեալ Թագաւոր Կայսեր Թաղումն:

Այսօր բոլոր Ռուսաստանում կատարվում էր հոգեհանգիստ. ամենուրեք սուգ և կոծ էր:

Սուգը աղքունիքում Թողած է ամբողջ տարի:

Ռուսինիայի իշխանութիւնը անուանուել է Թագաւորութիւն:

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԻՐԺԱ.

9-ին մարտի.

Աքց. բանկ.	1-ին	96	12
— —	2-րդ	92	87
— —	3-րդ	93	50
— —	4-րդ	93	12
վ.ճձակահ.	1-ին	224	75
— —	2-րդ	217	50
Արև. փոխառ.	1-ին .	93	23
»	» 2-րդ .	92	12
»	» 3-րդ .	92	24
Լօնդոն		24	87
Բերլին		127	37
Համբուրգ		213	—
փարիզ		262	—
Ոսկի		7 ռ.	95 կ.

Բիրժայի վճռակը խաղաղ է:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Ղարաբաղի ՆՈՐԱՇԷՆ գիւղից պ. Մ. Տ. Ց. մեզ գրում է.

Այս տարի յունվարից սկսած մեզանում սաստիկ անձրևներ են գալիս խառնուն ձիւնի հետ. այս անձրևի առատ գալն էր, որ աչնան չարունակ երեք ամիս երաչտութեան ժամանակ ցանած ցորենն ու գարին բացրեց. եթէ անձրևներ չ'տեղային, ցանքը կ'չորանար և թանդուրթիւնը անցեալ տարուանից աւելի տարափելի կ'լինէր այս տարի: Աչնանը օրէցօր ալիւրի գինը բարձրանում էր, քանի որ երաչտ էր, բայց այժմ փոռք Աստուծոյ, օրէցօր իջնում է: Առաջ ցորենի չուալը, որ 8 փութ է, վաճառվում էր 15 մանէթով, գարիի չուալը, որ 6 փութ է,—6 մանէթով. այժմ ցորերի չուալը վաճառվում է 7 մանէթով, գարունը – 2 մանէթ 40 կոպէկով, բայց առնող էլ չ'կայ:—Վաճառվում են. եղի գրվանքան 50 կոպէկով, մսինը 10 կոպէկով, բրնձինը 5 կոպ.

***

Նոյն տեղից մեզ գրում են. ամսոյս 24-ին, գիշերուայ կիսին, այս գիւղի մէջ մի աղմուկ բարձրացաւ, դուրս ելայ անից և տեսայ որ ամբողջ գիւղը լուսաւորված է, հարցուցի սորա պատճառը գիւղականներից մէկին,—ասայ նա եթէ՝ մեր խեղճ Տէր Յակոբ Տէր-Կարապետեանի չէնի տակի այգում եղած խոտի դէզը կրակ են տուել. դեռ այս քիչ էր իմանում անիրաւ չարագործը, գնում կտրտում է նորա թթենի այգուց, որ գիւղից չատ ցած է, մօտ 50 ծառ և խեղճի տունը աւերում հանարեա թէ: Տէր հայրը զանազան կարծիքներ է անում զանազան մարդկանների վերայ, բայց իրա թշնամին լաւ չէ կարողանում ճանաչել: Իշխանութեան ուշքը գարձնում եմ այս չարագործութեան վերայ. եթէ իշխանութիւնը հոգ չ'տանէ այս մասին, ամբողջ նորաչէնցիները առանց այգիների կ'մնան ու կ'ընկնեն յետին չքաւորութեան մէջ. տոցա միակ ապրուստի միջոցը հանարեա թէ այգիներն են:

***

ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅԻՑ մեզ գրում են. բարեկենդանի օրերում Քարվանսարայ գիւղում պատահեցաւ մի հետաքրքիր դէպք, այն է մի երիտասարդ, որ մօտ մի տարի է, ինչ նշան է դրած մի աղջկայ վերայ, անցեալ ամառը իւր աներից առնում է 50 ռ. փող զանազան կենսական պահանջների վրայ ծախսելու: Գալիս է պսակի ժամանակը, այն է բարեկենդանի հինգշաբթին, աները պահանջում է իւր փեսայացուից, որ նախ նա վճարէ 50 ռուբլին և ապա պսակուի աղջկայ հետ, փեսայացուն պատրաստ փող չունենալով, առաջարկում է աներոջ փոխանակ փողի 50 ռուբլու մարմար, աները չի համաձայնում և պահանջում է, որ նա անպատճառ փող վճարի. տղան վախենալով, որ մի գուցէ հարսանեաց պատրաստութիւնները իզուր անցնին, որ տեղից լինում է վճարում է 50 ռուբլի և յանձնում է աներոջը. աները փողը ստանալուն պէս փոխում է իւր որոչումը՝ այլ ևս չի կամենում աղջկան նշանդրէն տալ, այլ մի ուրիշի: Տղան տեսնելով, որ հարսանեաց բոլոր պատրաստութիւնները իզուր պէտք է անցնին, վճռում է մի կերպիւ անպատճառ ձեռք ձգել աղջկան: Նոյն երեկոյեանները աղջիկը գնալիս է լինում գետից ջուր բերելու, յինչեալ երիտասարդը տեսնելով նորան հեռուից, մի ձի է պատրաստում, առնում է իւր հետ ելի ուրիշ երկու երիտասարդ, գնում և աղջկան երիտասարդների օգնութեամբ ձի նստեցնում, փախչում է և մտնում մի ուխտարի գոմ: Այս բանը իմանալով աղջկայ տէրերը, ի թիւրս որոց և այլք, սկսում են որոնել աղջկան, բայց իզուր, որովհետև երիտասարդի բարեկամները ապահով ճանապարհով կարողանում են տանել աղջկան և տալին եկեղեցի և պսակում են:

***

Մեզ խնդրում են յայտնել թէ՝ «Փոռձի» այս տարուայ փետրվարի հաւարում «Ներսիսեան դպրանոցի 56-րդ տարեդարձը» վերնագրով յօդուածի մէջ մի տպագրական սխալ է սպրտել, որի ուղղելը պարտականութիւն է,

Այնտեղ տպած է դեկտ. Բաբայեանի հաչուետուութեան մէջ, որ պ. Յարութիւն Ստեփ. Յովրինեանը նուիրել է նոր ուսումնարանի չինութեան համար իբր 38 ռ., այն ինչ՝ յիշեալ հաչուի մէջ այդ նուիրատուութեան գումարը ցոյց էր տուած 83 ռ.:

Այժմ պէտք է աւելացնել, որ պ. Յար. Յովրինեանը յանկացաւ աւելացնել յիշեալ 83 ռուբլուն այնքան, որ կարելի լինի մի արևելեան փոխառութեան տոմսակ գնել և պահել իբրև նուէր իւր կողմից յատկապէս նոր ուսումնարանի չինութեան գործի համար, որի սկսուիլը յուսալի է թէ չատ հեռի չէ:

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ.

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ

Ի ՎԱՃԱՌՔ ԿԱՅԱՆ ՕՂԱՆՇՈՎՆ

Ի ՎԱՃԱՌՔ ԿԱՅԱՆ ՕՂԱՆՇՈՎՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՀՐԱՏԱՐԱԿԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՆՈԹՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ի ՎԱՃԱՌՔ ԿԱՅԱՆ ՕՂԱՆՇՈՎՆ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ

ՀՈԶԱԲԵՐԱԿԱՆ ԵՐԿԱՏՈՒԳԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ. 16-րդ ՄԱՐՏԱ 1881 թ. Տպագրիչ Ա.Մ.Ե. Յովհաննիսեան և Ի.